**Հավելված 5**

**«ԷԱՃԱՊՁԲ ԷԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ »* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ԷԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ-2**

ք. Երևան

____/____________/2021թ.

« Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյան ի, որը գործում է « Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ԹԱԳՀԷՄ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Հայկ Թագեսյան ի, որը գործում է « ԹԱԳՀԷՄ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները

խախտվել են ______ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա)  պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք,  իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի  6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ

ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ______ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ

ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 525060.00 AMD(հինգ հարյուր քսանհինգ հազար վաթսուն դրամ ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

_

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի  չափով:[9] [3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո*

*ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի  չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը  չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը* [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր

համաձայնության։

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

8.6 Եթե պայմանագիրն  իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու

օրվանից  հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը։

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի  կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը։

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները` նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով` հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան** **ԹԱԳՀԷՄ ՍՊԸ**

**Հիմնադրամ**

**ք. Երևան, Կորյունի 2**

**Հայբիզնեսբանկ ՓԲԸ**

**11500166513800**

**01503448**

**--------------------------------**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.10.14 13:37:18 AMST

**ք.Երևան, Լենինգրադյան 31/7**

**«ՎՏԲ-Հայաստանբանկ**

**16047808168200**

**01232586**

**--------------------------------**

**/ստորագրություն/**

Digitally signed by TADEVOSYAN HAYK 1912540029
Date: 2021.10.13 11:27:57 AMT

**Կ.Տ**

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]*9 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/____________/2021թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | 33691421/11 | 2 Ազոտական թթու խիտ | Ազոտական թթուն սուր գրգռող հոտով, հեղձուցիչ, անգույն կամ թույլ դեղնավուն, թափանցիկ, օդում ծխացող հեղուկ է: Խիստ անկայուն և պայթունավտանգ նյութ է, ուժեղ միահիմն թթու: Մոլյար կոնցենտրացիան 63.012 մոլ/լ է, խտությունը` 1,5±0,01 գ/սմ³: Ազոտական թթվի հալման ջերմաստիճանն է`-44±1°C, եռման ջերմաստիճանը` 181±1 °C: Կախված թթվի լուծույթի կոնցենտրացիայից, օգտագործում են նոսր և խիտ թթուները: Ազոտական թթվի զանգվածային բաժինը` 70%: Ֆորմատ` լիտր: Փաթեթվածքը` պոլիմերային շշերով: Նոր, չօգտագործված:Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 3 | 33621766/1 | 3 Աղաթթու (HCl) խիտ | Անգույն, թափանցիկ, ցնդող հեղուկ է:Պահպանման պայմանները`պահել չոր տեղում¦ Ֆորմատ`կգ: Մատակարարումը` 1կգ փաթեթավորմամբ: Նոր չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | 33691162/293 | 4 Աղաթթու HCl ֆիքսանալ 0,1 | Աղաթթվի HCL ֆիքսանալ 0,1Ն :Հերմետիկ փակված սրվակ լցված ստանդարտ կոնցենտրացիայի լուծույթով 0,1ն: Ֆորմատ՝ սրվակ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում: |
| 5 | 24411400/4 | 5 Ամոնիակ 10% | Ամոնիակի 10%-ոց լուծույթ: Անգույն, թափանցիկ, ցնդող հեղուկ է:Պահպանման պայմանները՝պահել չոր տեղում: Ֆորմատ՝ լիտր: Մատակարարումը՝0.5լիտր տարաներով: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 6 | 24411400/1 | 6 Ամոնիումի հիդրօքսիդ NH4OH | Ամոնիումի հիդրօքսիդ- սուր հոտով, անգույն հեղուկ:Պահպանման պայմանները՝պահել չոր տեղում¦ Ֆորմատ՝ լիտր: Մատակարարումը՝ 1լիտր տարաներով: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 7 | 33791300/21 | 7 Ապակյա ձագար 3.5սմ տրամագծով | Ձագար ապակյա d=3,5սմ; Ֆորմատ՝ հատ: Նոր չօգտագործված: |
| 8 | 33791300/22 | 8 Ապակյա ձագար 7.5սմ տրամագծով | Ձագար ապակյա d=7,5սմ; Ֆորմատ՝ հատ: Նոր չօգտագործված: |
| 10 | 33791300/24 | 10 Առարկայական ապակի 2.5x7.5 սմ | Առարկայական ապակի 2.5սմx7.5սմ չափսի, մաքուր կվարցից: Ջերմադիմացկուն և թափանցիկ: Ֆորմատ՝ 1 հատ առարկայական ապակի: Փաթեթվածքը՝ 50 հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը: |
| 13 | 33791300/25 | 13 Բաժակ ապակյա 250 մլ նիշերով | Ապակյա, գլանաձև բաժակ տարողությունը՝250 մլ: Ֆորմատ՝հատ: Նոր, չօգտագործված: |
| 16 | 33691421/12 | 16 Բենզոլ | Բենզոլի քիմիական բանաձևը C6H6: Օրգանական միացություն է, պարզագույն արոմատիկ ածխաջրածին: Անգույն հեղուկ է յուրահատուկ հոտով; Մոլյար մասսան 78,11գ/մոլ: Ֆորմատ՝ լիտր: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-րդը: |
| 20 | 33691422/33 | 20 Գլյուկոզա փոշի | Գլյուկոզա փոշի՝ սպիտակ բյուրեղներով փոշի է: Ֆորմատ՝ կիլոգրամ: Պահպանման պայմանները՝ չոր, արևի ճառագայթներից պաշտպանված վայրում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Մատակարարումը՝ 1կգ-ոց փաթեթավորմամբ: |
| 21 | 33691421/13 | 21 Դիէթիլեթեր 90% | Դիէթիլեթեր 90% մ.ա.հ. մուգ հեղուկ ապակյա տարաներում: Պահպանման պայմանները՝ պահել արևի ճառագայթներից պաշտպանված վայրում: Ֆորմատ՝լիտր: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 24 | 24321820/1 | 24 Էթիլացետատ | Անգույն հեղուկ ,հաճելի քաղցր հոտով: Պահպանման պայմանները՝ պահել չոր , արևի ճառագայթներից պաշտպանված վայրում: Ֆորմատ՝լիտր: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Նոր, չօգտագործված: |
| 26 | 33691422/34 | 26 Թրթնջկաթթու | Անգույն բյուրեղներ են, ուժեղ օրգանական թթու է: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում: Ֆորմատ՝կգ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 28 | 33691167/33 | 28 Իմերսիոն յուղ | Իմերսիոն յուղ: Անգույն, թափանցիկ, մածուցիկ հեղուկ: Ֆորմատ՝ 100մլ սրվակում/հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայամանները՝ պահել չոր տեղում: |
| 29 | 38431700/16 | 29 Ինդիկատոր | (Լակմուս )ունիվերսալ հայտանյութ թղթե: Ֆորմատ՝հատ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: Պահպանման պայամանները՝ պահել չոր տեղում: |
| 33 | 33691422/36 | 33 Լանոլին | Լանոլին՝ թանձր, գորշ դեղնավուն զանգված: Ֆորմատ՝ կիլոգրամ: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում: Մատակարարումը՝1կգ տարաներով: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 34 | 38431700/20 | 34 Խողովակ ապակյա | Խողովակ ապակյա տրամագիծը 5 մմ, պատի հաստությունը 0,8մմ, երկարութունը 220մմ: Նոր չօգտագործված: Նոր, չօգտագործված: |
| 35 | 33141211/259 | 35 Ծայրակալների հենարան (շտատիվ) 1 | 5000 մկլ աշխատանքային ծավալով ծայարակալների շտատիվ, 28 տեղանոց: Նոր չօգտագործված: |
| 37 | 33691422/37 | 37 Ծծմբական թթու | Ծծմբական թթուն երկհիմն շատ ուժեղ թթու է: Ջրային լուծույթներում |

| | | | |
|---|---|---|---|
| | | խիտ | ծծմբական թթուն ամբողջությամբ դիսոցվում է: Ծանր, յուղանման հեղուկ: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում: Ֆորմատ՝կգ: Մատակարարումը՝ 1 կգ-ոց տարաներով: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 40 | 33691422/39 | 40 Կալիումի քլորիդ | Անգույն բյուրեղներ: Ֆորմատ՝կգ: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում: Մատակարարումը՝ 1 կգ փաթեթավորմամբ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 41 | 33791300/28 | 41 Կենսաբանական փործանոթ | Ջերմադիմացկուն, թափանցիկ, ապակյա: Ֆորմատ՝հատ: Նոր չօգտագործված: |
| 42 | 33791300/29 | 42 Կերամիկական բաժակ 1,0լ | Կերամիկական բաժակ 1,0 լիտրանոց, բռնակով. Ֆորմատ՝հատ: Նոր չօգտագործված: |
| 43 | 33791300/30 | 43 Կյուվետ կվարցե ֆլյուորիմետրիայի համար | Կյուվետ կվարցե ֆլյուորիմետրիայի համար՝ չորս փայլեցված կողմերով, 10x10 մմ օպտիկական ճանապարհով, 45 մմ բարձրությամբ: Ֆորմատ՝ հատ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 առկայություն: Նոր չօգտագործված: |
| 44 | 33791300/31 | 44 Կոլբա կոնաձև 250մլ | Ապակյա կոլբա կոնաձև առանց շլիֆի տարողությունը՝250մլ: Ֆորմատ՝հատ: Նոր չօգտագործված: |
| 46 | 33691421/14 | 46 Հեքսան | Քիմիապես մաքուր: Անգույն հեղուկ,թույլ հոտով: Պահպանման պայմանները՝ պահել զով, օդափոխվող տարածքում: Ֆորմատ՝ լիտր: Մատակարարումը՝ 1լիտր փաթեթավորմամբ: Նոր, չօգտագործված: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն: |
| 47 | 24211140/5 | 47 Հիմնային ֆուքսին | Ներկանյութ հիմնային ֆուքսինը իրենից ներկայացնում է կանաչ բյուրեղներ, մետաղյա փայլով: Պիտանիության ժամկետի 2/3 ի առկայություն: Պահպանման պայմանները՝ պահել չոր տեղում: Նոր չօգտագործված: |

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

**ԳՆՈՐԴ** **ՎԱՃԱՌՈՂ**

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան
__________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.10.14 13:38:09 AMST

ԹԱԳՀԷՄ ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Լենինգրադյան 31/7
«ՎՏԲ-Հայաստանբանկ
16047808168200
01232586
Հայկ Թագեսյան
__________
/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by TAGESYAN HAYK 1912540029
Date: 2021.10.13 11:34:25 AMT

Հավելված N 2
____/____________/2021թ. կնքված
ԷԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

## ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 2 | լիտր | 6732.00 | 3366.00 | 0.5 | ք. Երևան, Կորյունի 2 | 0,5 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 3 | կիլոգրամ | 594.00 | 2970.00 | 5 | ք. Երևան, Կորյունի 2 | 5 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 4 | հատ | 390.96 | 19548.00 | 50 | ք. Երևան, Կորյունի 2 | 50 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 5 | լիտր | 489.60 | 1224.00 | 2.5 | ք. Երևան, Կորյունի 2 | 2,5 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 6 | լիտր | 742.00 | 4452.00 | 6 | ք. Երևան, Կորյունի 2 | 6 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | պայմանագիրը կնքելու օրվանից |
| 7 | հատ | 435.60 | 4356.00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 8 | հատ | 762.00 | 7620.00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 10 | հատ | 8.30 | 2490.00 | 300 | ք. Երևան, Կորյունի 2 | 300 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | հատ | 594.00 | 11880.00 | 20 | ք. Երևան, Կորյունի 2 | 20 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 16 | լիտր | 3465.00 | 6930.00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 20 | կիլոգրամ | 1188.00 | 19008.00 | 16 | ք. Երևան, Կորյունի 2 | 16 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 21 | լիտր | 4944.00 | 2472.00 | 0.5 | ք. Երևան, Կորյունի 2 | 0,5 | Ապրանքի մատակարարումն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 24 | լիտր | 4944.00 | 2472.00 | 0.5 | ք. Երևան, Կորյունի 2 | 0,5 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 26 | կիլոգրամ | 984.00 | 492.00 | 0.5 | ք. Երևան, Կորյունի 2 | 0,5 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 28 | հատ | 990.00 | 9900.00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 29 | հատ | 1138.32 | 28458.00 | 25 | ք. Երևան, Կորյունի 2 | 25 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 33 | կիլոգրամ | 9900.00 | 19800.00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 34 | հատ | 1483.20 | 37080.00 | 25 | ք. Երևան, Կորյունի 2 | 25 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 35 | հատ | 4454.40 | 111360.00 | 25 | ք. Երևան, Կորյունի 2 | 25 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 37 | կիլոգրամ | 792.00 | 3168.00 | 4 | ք. Երևան, Կորյունի 2 | 4 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 40 | կիլոգրամ | 792.00 | 792.00 | 1 | ք. Երևան, Կորյունի 2 | 1 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կնքելու օրվանից |
| 41 | հատ | 74.10 | 1482.00 | 20 | ք. Երևան, Կորյունի 2 | 20 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 42 | հատ | 4653.00 | 46530.00 | 10 | ք. Երևան, Կորյունի 2 | 10 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 43 | հատ | 69300.00 | 138600.00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացուցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 44 | հատ | 643.50 | 12870.00 | 20 | ք. Երևան, Կորյունի 2 | 20 | Ապրանքի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 46 | լիտր | 2970.00 | 5940.00 | 2 | ք. Երևան, Կորյունի 2 | 2 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |
| 47 | կիլոգրամ | 99000.00 | 19800.00 | 0.2 | ք. Երևան, Կորյունի 2 | 0,2 | Ապրանքի մատակարարումն իրականացվում է 2021 թվականին՝ միանվագ 20 օրացույցային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված

մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ** | **ԹԱԳՀԷՄ ՍՊԸ** |
| **Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2** | **Հասցե՝ ք.Երևան, Լենինգրադյան 31/7** |
| **Հայբիզնեսբանկ ՓԲԸ** | **«ՎՏԲ-Հայաստանբանկ** |
| **11500166513800** | **16047808168200** |
| **01503448** | **01232586** |
| **Արմեն Աբգարի Մուրադյան** | **Հայկ Թագեսյան** |
| **___________** | **___________** |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.10.14 13:38:30 AMST

Digitally signed by TAGESYAN HAYK 1912540029
Date: 2021.10.13 11:35:28 AMT

Հավելված N 3

____/____________/2021թ. կնքված

ԵԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 2 | 33691421/11 | 2 Ազոտական թթու խիտ | | | | | | | | | | 3366.00 | 3366.00 | 3366.00 | 3366.00 |
| 3 | 33621766/1 | 3 Աղաթթու (HCl) խիտ | | | | | | | | | | 2970.00 | 2970.00 | 2970.00 | 2970.00 |
| 4 | 33691162/293 | 4 Աղաթթու HCl ֆիքսանալ 0,1 | | | | | | | | | | 19548.00 | 19548.00 | 19548.00 | 19548.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 24411400/4 | 5 Ամոնիակ 10% | | | | | | | | | | 1224.00 | 1224.00 | 1224.00 | 1224.00 |
| 6 | 24411400/1 | 6 Ամոնիումի հիդրօքսիդ NH4OH | | | | | | | | | | 4452.00 | 4452.00 | 4452.00 | 4452.00 |
| 7 | 33791300/21 | 7 Ապակյա ձագար 3.5սմ տրամագծով | | | | | | | | | | 4356.00 | 4356.00 | 4356.00 | 4356.00 |
| 8 | 33791300/22 | 8 Ապակյա ձագար 7.5սմ տրամագծով | | | | | | | | | | 7620.00 | 7620.00 | 7620.00 | 7620.00 |
| 10 | 33791300/24 | 10 Առարկայական ապակի 2.5x7.5 սմ | | | | | | | | | | 2490.00 | 2490.00 | 2490.00 | 2490.00 |
| 13 | 33791300/25 | 13 Բաժակ ապակյա 250 մլ նիշերով | | | | | | | | | | 11880.00 | 11880.00 | 11880.00 | 11880.00 |
| 16 | 33691421/12 | 16 Բենզոլ | | | | | | | | | | 6930.00 | 6930.00 | 6930.00 | 6930.00 |
| 20 | 33691422/33 | 20 Գլյուկոզա փոշի | | | | | | | | | | 19008.00 | 19008.00 | 19008.00 | 19008.00 |
| 21 | 33691421/13 | 21 Դիէթիլեթեր 90% | | | | | | | | | | 2472.00 | 2472.00 | 2472.00 | 2472.00 |
| 24 | 24321820/1 | 24 Էթիլացետատ | | | | | | | | | | 2472.00 | 2472.00 | 2472.00 | 2472.00 |
| 26 | 33691422/34 | 26 Թրթնջկաթթու | | | | | | | | | | 492.00 | 492.00 | 492.00 | 492.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | 33691167/33 | 28 Իմերսիոն յուղ | | | | | | | | | | 9900.00 | 9900.00 | 9900.00 | 9900.00 |
| 29 | 38431700/16 | 29 Ինդիկատոր | | | | | | | | | | 28458.00 | 28458.00 | 28458.00 | 28458.00 |
| 33 | 33691422/36 | 33 Լանոլին | | | | | | | | | | 19800.00 | 19800.00 | 19800.00 | 19800.00 |
| 34 | 38431700/20 | 34 Խողովակ ապակյա | | | | | | | | | | 37080.00 | 37080.00 | 37080.00 | 37080.00 |
| 35 | 33141211/259 | 35 Ծայրակալների հենարան (շտատիվ) 1 | | | | | | | | | | 111360.00 | 111360.00 | 111360.00 | 111360.00 |
| 37 | 33691422/37 | 37 Ծծմբական թթու խիտ | | | | | | | | | | 3168.00 | 3168.00 | 3168.00 | 3168.00 |
| 40 | 33691422/39 | 40 Կալիումի քլորիդ | | | | | | | | | | 792.00 | 792.00 | 792.00 | 792.00 |
| 41 | 33791300/28 | 41 Կենսաբանական փորձանոթ | | | | | | | | | | 1482.00 | 1482.00 | 1482.00 | 1482.00 |
| 42 | 33791300/29 | 42 Կերամիկական բաժակ 1,0լ | | | | | | | | | | 46530.00 | 46530.00 | 46530.00 | 46530.00 |
| 43 | 33791300/30 | 43 Կյուվետ կվարցե ֆլյուորիմետրիայի համար | | | | | | | | | | 138600.00 | 138600.00 | 138600.00 | 138600.00 |
| 44 | 33791300/31 | 44 Կոլբա կոնաձև | | | | | | | | | | 12870.00 | 12870.00 | 12870.00 | 12870.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 250մլ | | | | | | | | | | | | | |
| 46 | 33691421/14 | 46 Հեքսան | | | | | | | | | | 5940.00 | 5940.00 | 5940.00 | 5940.00 |
| 47 | 24211140/5 | 47 Հիմնային ֆուքսին | | | | | | | | | | 19800.00 | 19800.00 | 19800.00 | 19800.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**
**Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ**
**Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2**
**Հայբիզնեսբանկ ՓԲԸ**
**11500166513800**
**01503448**
**Արմեն Աբգարի Մուրադյան**
**___________**
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2021.10.14 13:38:45 AMST

**ՎԱՃԱՌՈՂ**
**ԹԱԳՀԷՄ ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Լենինգրադյան 31/7**
**«ՎՏԲ-Հայաստանբանկ**
**16047808168200**
**01232586**
**Հայկ Թագեսյան**
**___________**
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

Digitally signed by TAGESYAN HAYK 1912540029
Date: 2021.10.13 11:36:08 AMT

Հավելված N 4
____/___________/2021թ. կնքված
ԵԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________________________ | ________________________________ |
| ________________________________ | ________________________________ |
| գտնվելու վայրը ________________ | գտնվելու վայրը ________________ |
| հհ ________________ | հհ ________________ |
| հվհհ ________________ | հվհհ ________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «_________________» 20__թ.
Պայմանագրի համարը` ԵԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ-2
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «______________» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները`

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 2 | 2 Ազոտական թթու խիտ | | | | | | | |
| | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 3 Աղաթթու (HCl) խիտ | | | | | | | | |
| 4 | 4 Աղաթթու HCl ֆիքսանալ 0,1 | | | | | | | | |
| 5 | 5 Ամոնիակ 10% | | | | | | | | |
| 6 | 6 Ամոնիումի հիդրօքսիդ NH4OH | | | | | | | | |
| 7 | 7 Ապակյա ձագար 3.5սմ տրամագծով | | | | | | | | |
| 8 | 8 Ապակյա ձագար 7.5սմ տրամագծով | | | | | | | | |
| 10 | 10 Առարկայական ապակի 2.5x7.5 սմ | | | | | | | | |
| 13 | 13 Բաժակ ապակյա 250 մլ նիշերով | | | | | | | | |
| 16 | 16 Բենզոլ | | | | | | | | |
| 20 | 20 Գլյուկոզա փոշի | | | | | | | | |
| 21 | 21 Դիէթիլեթեր 90% | | | | | | | | |
| 24 | 24 Էթիլացետատ | | | | | | | | |
| 26 | 26 Թրթնջկաթթու | | | | | | | | |
| 28 | 28 Իմերսիոն յուղ | | | | | | | | |
| 29 | 29 Ինդիկատոր | | | | | | | | |
| 33 | 33 Լանոլին | | | | | | | | |
| 34 | 34 Խողովակ ապակյա | | | | | | | | |
| 35 | 35 Ծայրակալների հենարան (շտատիվ) 1 | | | | | | | | |
| 37 | 37 Ծծմբական թթու խիտ | | | | | | | | |
| 40 | 40 Կալիումի | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | քլորիդ | | | | | | | |
| 41 | 41 Կենսաբան ական փորձանոթ | | | | | | | |
| 42 | 42 Կերամիկական բաժակ 1,0լ | | | | | | | |
| 43 | 43 Կյուվետ կվարցե ֆլյուո րիմետրիայի համար | | | | | | | |
| 44 | 44 Կոլբա կոնաձև 250մլ | | | | | | | |
| 46 | 46 Հեքսան | | | | | | | |
| 47 | 47 Հիմնային ֆուքսին | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց**

___________________________

**ստորագրություն**

___________________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

**Ապրանքը ընդունեց**

___________________________

**ստորագրություն**

___________________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/____________/2021թ. կնքված
ԵԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ -ի (այսուհետ` Գնորդ) և ԹԱԳՀԷՄ ՍՊԸ (այսուհետ` Վաճառող) միջև 20 թ.______________________________ -ին կնքված N ԵԱՃԱՊՁԲ-2021/15-1-ԵՊԲՀ-2 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| 2 Ազոտական թթու խիտ | լիտր | |
| 3 Աղաթթու (HCl) խիտ | կիլոգրամ | |
| 4 Աղաթթու HCl ֆիքսանալ 0,1 | հատ | |
| 5 Ամոնիակ 10% | լիտր | |
| 6 Ամոնիումի հիդրօքսիդ NH4OH | լիտր | |
| 7 Ապակյա ձագար 3.5սմ տրամագծով | հատ | |
| 8 Ապակյա ձագար 7.5սմ տրամագծով | հատ | |
| 10 Առարկայական ապակի 2.5x7.5 սմ | հատ | |
| 13 Բաժակ ապակյա 250 մլ նիշերով | հատ | |
| 16 Բենզոլ | լիտր | |
| 20 Գլյուկոզա փոշի | կիլոգրամ | |
| 21 Դիէթիլեթեր 90% | լիտր | |
| 24 Էթիլացետատ | լիտր | |
| 26 Թրթնջկաթթու | կիլոգրամ | |
| 28 Իմերսիոն յուղ | հատ | |
| 29 Ինդիկատոր | հատ | |
| 33 Լանոլին | կիլոգրամ | |
| 34 Խողովակ ապակյա | հատ | |
| 35 Ծայրակալների հենարան (շտատիվ) 1 | հատ | |

| | | |
|---|---|---|
| 37 Ծծմբական թթու խիտ | կիլոգրամ | |
| 40 Կալիումի քլորիդ | կիլոգրամ | |
| 41 Կենսաբանական փործանոթ | հատ | |
| 42 Կերամիկական բաժակ 1,0լ | հատ | |
| 43 Կյուվետ կվարցե ֆլյուորիմետրիայի համար | հատ | |
| 44 Կոլբա կոնաձև 250մլ | հատ | |
| 46 Հեքսան | լիտր | |
| 47 Հիմնային ֆուքսին | կիլոգրամ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

________________________________________

**ազգանուն, անուն**

_____________________________________

**Ստորագրություն**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________________________

**ազգանուն, անուն**

______________________________________

**Ստորագրություն**